ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հուլիսի 19-ից 21-ը

Իտալիայի Հանրապետություն (ք. Միլան) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Լիա Ավագյան

Նաիրուհի Ավետիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջազգային համագործակցության վարչության միջազգային ծրագրերի իրականացման բաժնի գլխավոր հարկային տեսուչ/ ծրագրի համակարգող,

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջազգային համագործակցության վարչության տրանսֆերային գնագոյացման և հարկային համագործակցության բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Իտալիայի Հանրապետություն, ք. Միլան, հուլիսի 19-ից 21-ը

4. Հրավիրող կողմը՝

Իտալիայի հարկային գործակալություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

ՀՀ ՊԵԿ աշխատակիցների այցը Իտալիա իրականացվել է ՏՀԶԿ/ՄԱԶԾ «Հարկային տեսուչներ առանց սահմանի» ծրագրի շրջանակներում ՀՀ ՊԵԿ-ի և Իտալիայի եկամուտների գործակալության միջև աշխատանքային ծրագրով հաստատված առևտրային տվյալների բազայի օգտագործման վերապատրաստման նպատակով, որն էական նշանակություն ունի տրանսֆերային գնագոյացման կարգավորումների ներդրման և կարողությունների զարգացման համար:

Հանդիպման ընթացքում Իտալիայի հարկային մարմնի ներկայացուցիչների հետ համատեղ գնահատվել և ամփոփվել է ծրագրի շրջանակներում ձեռք բերված արդյունքները, ինչպես նաև ծրագրի ավարտին հասցնելու բոլոր անհրաժեշտ գործողությունները: Ինչպես նաև տեղի է ունեցել քննարկում համագործակցության ծրագրի համար պատասխանատու Իտալիայի հարկային մարմնի ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ միջազգային համագործակցության և ստուգումների վարչության ղեկավարների հետ՝ հարկային վարչարարության բնագավառում համագործակցության նոր ոլորտներ գնահատելու և առաջատար միջազգային փորձը Հայաստանում ներդնելու նպատակով: Այս առումով իտալական կողմի հետ նոր համագործակցության ոլորտի շուրջ բանակցությունների արդյունքում ստացվել է նախնական համաձայնություն արհեստական բանականության (Artificial Intelligence) փորձի ուսումնասիրման և ՀՀ ՊԵԿ կողմից հարկային վարչարարության բնագավառում կիրառման հարցում:

6. Քննարկված թեմաները՝

Հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք թեմաներ, մասնավորապես.

1. Ծրագրի կարգավիճակի վերանայում՝ ստացված արդյունքների գնահատմամբ: Հիմնական արդյունքներն են.

- Տրանսֆերային գնագոյացման հայկական օրենսդրության վերանայում և միջազգային չափանիշներին համապատասխանեցում,
- Տրանսֆերային գնագոյացման ռիսկերի գնահատման ընթացակարգի իրականացում,
- Տրանսֆերային գնագոյացման ստուգման ընթացակարգերի իրականացում, ներառյալ ստուգողների համար մշակված ձեռնարկը,
- Տրանսֆերային գնագոյացման բաժնի աշխատակիցների կարողությունների բարելավում տրանսֆերային գնագոյացման շրջանակներում վերլուծություններ և առևտրային տվյալների բազաների օգտագործման ժամանակ:

2. Քննարկում հաջորդ քայլերի և հնարավոր համագործակցության ապագա ոլորտների մասին (հանդիպում միջազգային ոլորտի և ստուգման ոլորտի ղեկավար պաշտոնյաների հետ՝ կարևորելով թվային փոխակերպման և արհեստական բանականության (Artificial Intelligence) ոլորտները:
3. Հնարավոր համագործակցություն Բյուրո Վան Դիկի (Bureau Van Dijk) կազմակերպության հետ՝ որպես Orbis/TP կատալիզատորի տվյալների բազայի մատակարար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպման ընթացքում դիտարկվել են մի շարք թեմաներ, որոնցից ամենակարևորներն են.

- Ինչպես օպտիմալացնել կազմակերպությունը, որպեսզի ամբողջական և արդյունավետ կերպով կիրառվի տրանսֆերային գնագոյացման հետ կապված հարցերը, մասնավորապես՝ վեճերի կանխարգելման և վեճերի լուծման հետ կապված խնդիրները:
- «Հարկային տեսուչներ առանց սահմանի» ծրագրի շրջանակներում ձեռք բերված հիմնական արդյունքները:
- Ինչպես սկսել համագործակցություն Բյուրո Վան Դիկ (Bureau Van Dijk) կազմակերպության հետ՝ տրանսֆերային գնագոյացման ստուգման իրականացման ընթացքում տվյալների բազայի ծառայություններից օգտվելու համար:
- Իտալիայի հարկային մարմնի ղեկավար պաշտոնյաների հետ կայացած հանդիպման շրջանակներում համագործակցության հնարավոր նոր ոլորտների ուսումնասիրում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

1. Պաշտոնապես ՏՀԶԿ/ՄԱԶԾ «Հարկային տեսուչներ առանց սահմանի» ծրագրի փակում,

2. Համագործակցության հնարավոր նոր ոլորտների վերաբերյալ ծրագրի պլանի (Project paln) փոխանակում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մինչև սեպտեմբերի վերջ Իտալիայի եկամուտների գործակալության հետ հնարավոր համագործակցության ծրագրի վերաբերյալ զեկույցի պատրաստում:

Պատասխանատու անձինք են հանդիսանում նախագծի համակարգողները, ոլորտի պատասխանատու ղեկավար պաշտոնյաները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

26.07.2022թ.